ԿԱԹՈՂԻԿՈՍԱԿԱՆ ՏԵՂԱՊԱՀ ԱՄԵՆԱՊԱՏԻՎ
Տ. ՆԵՐՍԵՍ ԱՐՔԵՊՍ. ՊՈՉԱՊԱԼՅԱՆ

ԿԱԹՈՂԻԿՈՍԱԿԱՆ ՏԵՂԱՊԱՀ

Տ. ՆԵՐՍԵՍ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՊՈՉԱՊԱԼՅԱՆԻ

ԿԵՆՍԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Ներսես արքեպս. Պոզապալյանը, ավազանի անունով՝ Հակոբ, ծնվել է 1937 թ. հուլիսի 5-ին Գըրըգ Խան քաղաքում /Թուրքիա/, արհեստավորի ընտանիքում:

1939 թ. ընտանիքով գաղթել և հաստատվել են Բեյրութում, ուր ստացել է իր նախնական կրթությունը, տեղի հայկական Նուպարյան վարժարանում:

1951 թ. ընդունվել է Անթիլիասի Դպրեվանք, ուր սովորել է մինչև 1955 թվականը:

1955-1957 թթ. սովորել է էշրեֆիե թաղամասում գտնվող Կենտրոնական բարձրագույն վարժարանում:

1957 թ. սեպտեմբերին ծնողների հետ ներգաղթել է Հայաստան և մեկ ամիս անց ընդունվել Ս. Էջմիածնի Հոգևոր ճեմարան:

1957 թ., ձեռամբ Հայկազուն արքեպս. Աբրահամյանի, ձեռնադրվել է սարկավագ:

1960 թ. ավարտելով Հոգևոր ճեմարանը՝ մեկնել է Մոսկվա և մեկ տարի ուսանել Զագորսկի Հոգևոր ակադեմիայում:

1961 թ. հունիսի 5-ին, ձեռամբ Ամենայն Հայոց Վազգեն Ա Կաթողիկոսի, ձեռնադրվել է կուսակրոն քահանա՝ վերանվանվելով Ներսես աբեղա:

Կրոնական-եկեղեցական կրթությունը խորացնելու նպատակով 1963-1965 թթ. սովորել է Յորքշիրի /Անգլիա/ Հարության կոլեջի /College of "Resurrection", Yorkshire, England/ կրոնական բարձրագույն ուսումնարանում:

1965-1969 թթ. վերադառնալով Մայր Աթոռ՝ վարել է Հոգևոր ճեմարանի տեսչության պաշտոնը:

1969-1970 թթ. սովորել է Ժենևի էկումենիկ ինստիտուտում: 1969-1972 թթ. իբրև հոգևոր հովիվ ծառայել է Ժենևի հայոց Ս. Հակոբ եկեղեցում:

1972-1974 թթ. եղել է հոգևոր հովիվը Լոնդոնի Ս. Սարգիս եկեղեցու:

1974 թ. Համայնքային եկեղեցական խորհրդի կողմից ընտրվել է Անգլիայի հայոց առաջնորդ: 1974 թ. հոկտեմբերին, ձեռամբ Ամենայն Հայոց Կաթողիկոս

Վազգեն Ա-ի, ձեռնադրվել է եպիսկոպոս և նշանակվել Անգլիայի հայոց առաջնորդ և Հայրապետական պատվիրակ Քենթրբերիի Արքեպիսկոպոսի մոտ:

1982 թ. Ամենայն Հայոց Կաթողիկոս Վազգեն Ա-ի հրավերով վերադարձել է Մայր Աթոռ Իբրև դիվանապետ:

Սրբազան Հայրը նաև էկումենիկ աշխատանք է ծավալել Մայր Աթոռում: 1983 թ. ընտրվել է Եկեղեցիների Համաշխարհային Խորհրդի Կենտրոնական Կոմիտեի անդամ: Եղել է Հայաստանի Աստվածաշնչային ընկերության հիմնադիրը և ցարդ շարունակում է ծառայել Իբրև նույն հաստատության Տնօրենների Խորհրդի ատենապետ:

1998 թ. նոյեմբերին ընտրվել է Ռուսաստանի Հումանիտար ակադեմիայի ակադեմիկոս: Հեղինակ է շուրջ մեկ տասնյակ բանաստեղծական և քարոզչական հատորների:

1999 թ. հուլիսի 4-ին Գերագույն Հոգևոր Խորհրդի և եպիսկոպոսաց համատեղ ժողովի կողմից ընտրվել է Կաթողիկոսական Տեղապահ: